

Ե Ր Ա Ջ Ա Ն Ք

•

Թարմ յուշերու զրգուանքին բացուած գիշեր մեղրածոր...
 Լիալուսնի խնկաթոյր փաղցրութիւնով հարսնետոր
 Ծառերն հեռուն կը շնչեն աղօս գոյներ մըբուշի...,
 Մըսերմութիւնն սենեկիս՝ սիրոյ սեղան արուեսի:

Սիրոյ սեղան արուեսի..., Զայգովըսկին շիք առ շիք՝
 Սըրժի լարէն ջութակին, հոգիիս մէջը վընիս
 Կը հեղու ցաւն իր աղու — «մեղամաղձոս սէրէնաս»...
 Մեղեդիի ստեղծագործ համբոյրներէն եմ շնչաս...:

Մեղամաղձոս ցայգանուագ... լուսաւաղախ ըստուերէն
 ձըկուն հասակ մ'արքենի հանդարտաբայլ կը դիմէ
 Հոգւոյս գունին՝ լոգանքի...: Սիրքս յուշիկ կը ծաղկի
 Այգեկութի պատրաստուող նազանքներովն այգիի...:

Հոգւոյս գունէն ոչ հեռու, երազս արձան մ'է աղուոր,
 Ոսքերուն ճակ՝ պատուանդան, անցեալս ըստեջ՝ վիտուոր...:
 Երազս պարիկ մ'է հիմա՝ որուն ոսքին կը փրոտեմ
 Տարիներս մօրքըւած..., ու յոյսն աչքիս՝ կը փալեմ

Քաղցր յուշերու զգուանքով, լոյս սեղանին արուեսի:

Ս. Ի. ԵՏՈՒՄ

•